Հավանության է արժանացել
մանկավարժական խորհրդի
30.12 2019թ. թիվ 04 նիստում
Տնօրեն՝ Ք. Ահարոնյան

Հաստատվել է հաստատության
խորհրդի 18.01.2020թ.
թիվ 01 նիստում
խորհրդի նախագահ՝
Ա. Եսայան

ԿԱՐԳ
ՀՀ ԿԳՄՍՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի «ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ (ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ) ՄԵԿ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ»

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում գործող մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն ուսանողների տեղափոխման կարգը:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է ուսումնական հաստատության գործող բոլոր մասնագիտությունների վրա անկախ ուսուցման ձևից:

3. Ուսանողի տեղափոխումը մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն (այսուհետ՝ Տեղափոխում) կատարվում է ուսանողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

4. Ուսանողի տեղափոխումն առաջին կիսամյակում չի թույլատրվում:

5. Մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն փոփոխություն թույլատրվում է միայն ուսանողի կողմից նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների (մոդուլների) տարբերությունները 8-ը չգերազանցելու պայմանով:

6. Նախընտրած մասնագիտության գծով հաստատված ուսումնական պլանով ուսանողի ուսումնառություն չանցած, չուսումնասիրած կամ ամփոփիչ ստուգում չանցած առարկաները և առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունները, համարվում են ակադեմիական տարբերություններ:

Ակադեմիական տարբերությունների ցանկը և ուսանողի կողմից դրանց հանձնման անհատական ժամանակացույցը կազմում է ուսումնական հաստատությունը՝ հիմք ընդունելով ուսումնական պլանը: Ուսանողի կողմից ակադեմիական տարբերությունների հանձնման առավելագույն ժամկետը մեկ ամիս է:

Տեղափոխումը կարող է կատարվել, եթե դրա արդյունքում, համապատասխան մասնագիտության տվյալ տարվա համար սահմանված ընդունելության տեղերի ընդհանուր թիվը պահպանվում է:

II. ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

7. Ուսանողը կամ նրա օրինական ներկայացուցիչը տեղափոխման մասին դիմում է ներկայացնում ուսումնական հաստատության տնօրենին՝ նրա գրավոր համաձայնությունը ստանալու համար:

Տեղափոխման մասին ուսանողից դիմումն ընդունվում է ուսումնական կիսամյակը սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

Տնօրենը եռօրյա ժամկետում գրավոր պատասխանում է ուսանողին՝ կցելով ակադեմիական տարբերությունների քանակը, կամ մերժման դեպքում՝ դրա փաստարկված հիմնավորումները:

Անվճար ուսուցման համակարգում ուսումնառած ուսանողի տեղափոխման դեպքում կրթությունը կազմակերպվում է անվճար հիմունքներով, եթե տվյալ տարվա համար սահմանված տեղերի շրջանակում նույն մասնագիտության համար վճարովի տեղ չի սահմանվել և առկա է թափուր տեղ:

8. Ուսումնական հաստատության տնօրենը, համաձայնության դեպքում, տալիս է ուսանողի տեղափոխման ժամանակավոր հրաման, որում նշվում են ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույցը:

Մինչև ուսանողի տեղափոխման գործընթացի ավարտը հաստատության տնօրենը իրավասու է ուսանողին ժամանակավորապես կցագրել համապատասխան խմբում և թույլատրել մասնակցելու ուսումնական պարապմունքներին:

9. Եթե ուսումնական հաստատությունում տվյալ մասնագիտությամբ տեղերի թիվն ավելի քիչ է, քան փոխադրվել ցանկացողների թիվը, ապա հավակնորդ ուսանողների կողմից ակադեմիական տարբերությունները դրական հանձնելուց հետո նրանց միջև անցկացվում է մրցույթ:

Մրցույթը անցկացվում է ակադեմիական տարբերությունների տեղեկանքում նշված առարկաներից, մոդուլներից ստացած միավորների և մասնագիտական մոդուլներից համալիր տեստային աշխատանքի միավորների միջին գնահատականի հիման վրա, որի արդյունքում ընտրվում են առավել բարձր միավորներ ստացածները:

Մրցույթային հավասար միավորներ ունենալու դեպքում, առավելությունը տրվում է մյուս առարկաներից առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողին:

10. Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ դրանք դրական գնահատականներով հանձնելու դեպքում ուսումնական հաստատության տնօրենն եռօրյա ժամկետում համապատասխան հրամանով ամրագրում է ուսանողի տեղափոխումը:

Ուսումնական հաստատությունում պահպանվում է ուսանողի անձնական գործը, որը ներառում է նաև՝

1) տեղափոխման մասին դիմումը

2) տեղափոխման քննությունների գրավոր աշխատանքները (դրանց առկայության դեպքում),

3) ուսանողի տեղափոխման մասին հրամանը,

4) հին ուսանողական տոմսը,

11. Ուսանողին տրվում է նոր ուսանողական տոմս և նրա հետ կնքվում նոր պայմանագիր, որի 2-րդ օրինակը կցվում է անձնական գործին:

12. Ունկնդրի տեղափոխումը կարգավորվում է ունկնդրի և ուսումնական հաստատության միջև կնքված պայմանագրով: